Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս

## ՖԱԴԵՅ ՏԱՃԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո՛ Ֆադեյ Տաճատի։

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը ջերմորեն ողջունում և շնորհավորում է Ձեզ՝ Ձեր ծննդյան 70, գիտական, մանկավարժական ու պետական գործունեության 50-ամյակի առթիվ, ցանկանում առողջություն, հաջողություն համատեղ աշխատանքում՝ ի շահ ԳԱԱ-ի 50-ամյա ճանապարհին ձեռք բերած լավագույն ավանդույթների ամրապնդման, գիտական մտքի արարումները հայ ժողովրդի վսեմ երազանքների իրականացմանը նպատակադրելու, ազգային ակադեմիայի հեղինակության բարձրացման։

Շուրջ 50 տարի է, ինչ Դուք գտնվում եք գիտական և մանկավարժական կյանքի առաջավոր գծում, ապրել եք մայր Հայաստանի հոգսերով, Ձեր եռանդն ու կարողը նվիրաբերել հարազատ ժողովրդին։

Ավելի քան 12 տարի ղեկավարելով Հայաստանի կառավարությունը, Դուք մեծ ներդրում ունեք ժողովրդական տնտեսության, գիտության և մշակույթի զարգացման գործում։ Ձեր անմիջական ու գործուն մասնակցությամբ և ղեկավարությամբ են կիրառում գտել կառավարման ավտոմատացված համակարգերի, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և համալիրների, արտադրական գործընթացների և արտադրության մեջ ներդրված ինժեներական համարձակ և արդյունավետ ծրագրերը, ընդլայնվել է մեծ ճանաչում գտած ռազմաարդյունաբերական համալիրը։

1990-ին, երբ Դուք ընտրվեցիք ՀՀ ԳԱԱ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, մենք՝ Ձեր գործընկերներս, մոտիկից ավելի լավ ճանաչեցինք Ձեզ և զգացինք, թե ակադեմիայի համար ստեղծված անբարենպաստ պայմաններում ինչպիսի հմտությամբ եք ղեկավարում և Ձեր ջանքերը նվիրաբերում գիտական կադրերի պահպանման, գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացման գործին։

1993 թ. ապրիլին ընտրվելով ազգային ակադեմիայի պրեզիդենտ, առաջին իսկ օրից ջանում եք բարձրացնել նոր փուլ թևակոխած, ինքնուրույն կարգավիճակ ստացած ազգային ակադեմիայի հեղինակությունը, ամրապնդել նրա լավագույն ավանդները։ Թեև կարճ ժամանակ է անցել, բայց նկատելի են առաջին դրական տեղաշարժերը։

Մենք բարձր ենք գնահատում Ձեր աշխատասիրությունը, համեստությունը, պահանջկոտությունը, կարգապահությունը, սկզբունքայնությունը և մարդկանց նկատմամբ ցուցաբերվող ուշադրությունը։

Թանկագի՛ն Ֆադեյ Տաճատի։

ԳԱԱ նախագահությունը ողջունելով և շնորհավորելով Ձեզ՝ Ձեր հոբելյանի առթիվ՝ լիահույս է, որ առաջիկա տարիներին Ձեր ուժերը, գիտելիքներն ու փորձը չեք խնայի ազգային ակադեմիայի առջև ծառացած խնդիրների լուծման համար։

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ ի շահ Հայաստանի գիտության։

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

15 սեպտեմբերի 1993 թ.



# Շնորհավորական հեռագրերից

Մեծարգո՛ Ֆադեյ Տաճատովիչ:

Ընդունեցեք մեր ջերմագին շնորհավորանքները Ձեր ծննդյան 70-ամյակի և գիտակազմակերպչական գործունեության 50-ամյակի կապակցությամբ: Մենք բարձր ենք գնահատում կառավարման գործընթացների բնագավառում Ձեր բազմամյա, բեղմնավոր գիտական աշխատանքը: Այսօր ղեկավարելով Հայաստանի ազգային ակադեմիան, Դուք հետագայում նույնպես կնպաստեք գիտության զարգացման գործին, Ռուսաստանի և Հայաստանի գիտնականների կապերի ընդլայնմանն ու խորացմանը:

Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, անձնական երջանկություն և երկար տարիների գործունեություն՝ ի բարօրություն մարդկության զարգացման:

Խորին հարգանքներով՝ Ռուսաստանի ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս
ՅՈՒ. ՕՍԻՊՈՎ

Ռուսաստանի ԳԱ նախագահության գլխավոր գիտական քարտուղար, ակադեմիկոս
Ի. ՄԱԿԱՐՈՎ

Հարգարժա՛ն Ֆադեյ Տաճատովիչ:

Ղրղզստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը ջերմորեն շնորհավորում է Ձեր ծննդյան 70-ամյակը և գիտակազմակերպչական գործունեության 50-ամյակը: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, ստեղծագործական նոր նվաճումներ՝ ի բարօրություն հայ ժողովրդի և հետագա ստեղծագործական հաջողություններ Ձեր բազմակողմանի գործունեության մեջ:

Անկեղծ հարգանքով՝ Ղրղզստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս
ԱՅԹՄԱՏՈՎ

Մեծարգո՛ Ֆադեյ Տաճատովիչ:

Վրաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը սրտանց շնորհավորում է Ձեր՝ ականավոր գիտնականի և հասարակական գործչի ծննդյան 70-ամյակը և գիտակազմակերպչական գործունեության 50-ամյակը: Հայ ժողովրդի ծանր փորձության օրերին Դուք ստանձնել եք ակադեմիայի ղեկավարությունը: Վստահություն ենք հայտնում, որ Դուք պատվով կհաղթահարեք բոլոր դժվարությունները և հուսով ենք, որ Հայաստանի ԳԱԱ պրեզիդենտի պաշտոնում արժանի ավանդ կներդնեք Հայաստանի ու Վրաստանի գիտությունների ակադեմիաների միջև ավանդական կապերի ամրապնդման և մեր ժողովուրդների բազմադարյան բարեկամության հետագա կայունացման գործում:

Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար տարիների կյանք և մեծ հաջողություններ գիտության ասպարեզում:

Վրաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս
ՏԱՎԽԵԼԻՁԵ

